

# Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

## ՀՆՈՒԹԵԱՆՆ ԿՇԻՒՆՐԻՔ

**Ո**րքան չէ կարող անցած դարերի յիշատակների, նախնիքների իսկական կեանքի մասին այնպէս լիապէս գաղափար տալ, այնպէս կենդանի կերպով վերականգնել նոցա իսկական պատկերը, ինչպէս նոյն իսկ նոցա ժամանակուայ, նոցա ձեռքով, խելքով և աշխատանքով առաջացած մի ըստ երևոյթի շատ աննշան բեկոր, Երբ մենք մեր ձեռքին ունինք այդ բեկորը, դիւրին է մեզ համար նիւթական, առարկայական բաղդատութիւնը և հետևապէս պատկերի գաղափարը լիապէս: Մեր հայրենիքը լի է բազմատեսակ պատմական խօսուէն առարկաներով: Հատերը՝ Հայոց անցեալով հետաքրքրուող հայ թէ՛ օտար բանասէրներից կրկնել են և դեռ երկար ժամանակ պիտի կրկնեն, թէ անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն դարձնել այդ հանգամանքի վրայ, թէ կարևոր է հնագիտական ժողովածուներ կազմել, ժամանակի աւերիչ ազդեցութիւնից ազատել այդ պատմական անգնահատելի վիաները: Բայց ո՞վ է ըստը և մանաւանդ թէ ո՞վ է կատարողը: Նման գործի նախաձեռնութիւնը պէտք է կենդրոնական մեծ հաստատութիւնները սրտանձնեն, նոքա պէտք է նախապէս կազմակերպեալ ծրագրով գործին լայն, ընդարձակ ընթացք տան, ըստ կարելոյն շատ անկերում ձիւղեր հաստատեն, նոցա հրահանգներ ուղարկեն, հսկեն իւրաքանչիւրի գործունէութեան վրայ: Առսաց մէջ այդ ուղղութեամբ սկսել են արդէն գործել Մոսկուայի և Պետերբուրգի հնագիտական ընկերութիւնները, որոնք վերջին տարիներս կոփկաս են ուղարկում յայտնի գիտնականներ հնութիւնները ուսումնասիրելու, բեզումներ կատարելու և

հետազոտութեանց արդիւնքը անմիջապէս հրատարակելով՝ գրաւում են հասարակութեան ուշադրութիւնը, իսկ պատմագէտի համար անհիփուսում են անբաւ նիւթ: Ինչքան ինձ յայտնի է, մեր մէջ էլ դնալով աւելի է ընդհանրանում հնութիւններ ժողովելու սէրը և նոյն իսկ գիւղացիների մէջ կան անձինք, որոնք վորձով տեսնելով թէ Եւրոպացի ճանապարհորդները ինչ մեծ նշանակութիւն են տալիս հնութեանը՝ ժողովում են և ծախում: Արիշ մի յօդուածում ասել էի, թէ մենք հոգևորականներս ինչ մեծ յարմարութիւն ունինք՝ մեզ օգնական ունենալով գիւղական ուսուցիչներին՝ հաւաքելու և ժողովածուներ կազմելու: Շատերը ինքնարեքարար իրանց ձեռքն ընկած հնութիւնը ուղարկում են Ս. Էջմիածնի թանգարանը, բայց ինչքան նկատել եմ, մեր գիւղական քահանաները այստեղ ուղարկելու արժանի են գտնում միայն ձեռագրեր և եկեղեցական անօթներ, մինչդեռ դրամները, արձանագրութեանց գոնէ ձիւղ և անսխալ ընդօրինակութիւնները, հին զէնքեր, անօթներ, գործիքներ և այլն մը նուստ են անուշադիր: Յուսալով և սղասելով, որ մի օր մենք էլ կանոնաւորեալ հնագիտական հիմնարկութիւն կունենանք, հարկաւոր ենք համարում այժմ յորդորել և խնդրել մեր քահանաներից և ուսուցիչներից, որ նոցանից իւրաքանչիւրը պատահած յարմար առիթը ձեռքից բաց չթողնի մեր հին յիշատակարանները փշանալուց, անհետանալուց ազատել, որ նոքա իբրև թանգագին նըշխարքներ հաւաքեն և պահպանեն հեղեղատների պատարքներից, գութանի ծայրից, նորաշէն աների հիմքից անսպասելի երևան եկող իրերը: Եթէ ցանկանում ենք մի օր ունենալ մեր պատմութիւնը ըստ կարելոյն լիակատար և անսխալ, մեր հորց կեանքը պատկերացնել, պէտք է աշխատենք, ի հարկէ ինչքան և ինչ որ հնարաւոր և կարելի է, նոյա գործերը աչքով տեսնել, ձեռքով շօշափել:

Օրէցօր մեր մատենադարանը և թանգարանը նորանոր յիշատակարաններ ձեռք բերելով աւելի է հարստանում թէ և ոչ ցանկացած չափով: Մանաւանդ Վեհափառ Հայրապետի Ս. Օժման հանդիսին եկող հոգևորականներից մի քանիսը Նորան մատուցանելու բախտ ունեցան բաւական թւով հնութիւններ և ձեռագրեր, որոնք անմիջապէս յանձնուած էին մատենադարանապետին և թանգարանի վերատեսուչներին: Չեռագրերը կը նկարագրուին ընդհանուր կազմելիք ցուցակի մէջ, իսկ հնութիւններից մի քանիսը, նախապէս Նորին Վեհափառութեան հաճութիւնը ստանալով, կցանկայի այժմ նկարագրել:

Իմ նկարագրելիք իրերը բերել է մեր հոգևորականների մէջ հնագէտի անուն ունեցող Մեսրոպ պրք եպիսկոպոս Ամբաստանը, որոնցից մանաւանդ երկուսը իւրեանց յիշատակարաններով մի թէ և շատ տղօտ լոյս են տալում Աղուանից կաթողիկոսների պատմութեան վրայ, որովհետև նոքա սեփականութիւն են կազմել Պետրոս կաթողիկոսի Դժբախտաբար չեմ կարող յիշել թէ Սրբազանը ինչ ճանապարհաւ և որտեղից է ձեռք գցել այս առարկաները, յուսանք որ այդ ինքը կը կատարի:

Առաջին կտորը մի քահանայական սաղաւարտ է և ունի այս նկարագիրը: Նրա ձևը նման է սովորական ֆէսերի, կամ միջից ծալած մորթեայ գլխարկի, բերանի տրամագիծը 56 սանտիմետր է, գագաթինը 15 սանտ., բարձրութիւնը դարձեալ 15 սանտ.: Արտաքին մասը զարգարած է բաւական նուրբ և ճաշակով կարած ասեղնագործով մետաքսի կարմիր շորի վրայ, որի տակին կարած է տանու գործ հաստ կարմիր կտու, իսկ մէջը թաղիք, ուրեմն այնպէս, ինչպէս կարուած են սովորական մորթի գլխարկները: Սաղաւարտի շուրջը ասեղնագործած են և արծաթեայ թելերով խառը դեղին, կարպոյտ և սպիտակ թելերի հետ ինը պատ-

կեր, իսկ գագաթին մի հաւասարաթեւ խաչ, չորս անկիւններում չորս հրեշտակ, Պատկերները ներկայացնում են հետևեալ անձինքը, 1. ՄԱԹ(Է)ՍՍ աւետարանիչը հանդիպակահայեաց, երկու ձեռքով բռնած Աւետարան, մի ռուբի և գլխի մազերի գոյնը դեղին է, 2. ՂՈՒԿԱՍ, նման առաջինին, 3. ՅԻՍ(ՆԱ) աջով խաղաղութիւն է տալիս, ձախով բռնել է մի գիրք(՝), 4. (Յ)ՈՂ(ԱՆ)Է(Ս), 5. ՄԱ(Ր)Կ(ՍՍ), 6. ՊՈՂ(ՍՍ), 7. ԱԴ(Յ), 8. ԹԱԹ(ԷՍՍ), սոցա բոլորի ձեռին էլ Աւետարան կայ, դանազան գիրքով բռնած և 9. ՊԵՏ(ՐՍՍ) բանալին աջ ձեռում: Բացի Յովհաննիսից բոլորն էլ մորուք ունին: Պատկերները միմեանցից բաժանուած են խորանաձև գծերով, որոնց վերևի մասում աստղեր կան: Սաղաւարտի բերանի շուրջը մեծ Մեսրոպեան տառերով գրած է հետևեալ յիշատակարանը. «Յիշատակ է Տէր Պետրոսին ի դուռն սուրբ Գրիգորին ի թիւն ՌձՂԳԵՍ (վերջի չորս տառերը, կամ երկու տառը ինձ մնում են անհասկանալի): Ամբողջը գործածութիւնից բաւական մաշուել է, տառերը տեղ տեղ եղծուել են, թելերի արծաթը թափուել է:

Երկրորդ կտորը մի քշոց է պղնձից շինած և կլեկած: Նրա տրամագիծը հաւասար է 21 սանտիմ., շրջանակի մէջտեղում բաւական կոպիտ և սկզբնական եղանակաւ պատկերացրած է մի վեցթեւեան սերովբէ, իսկ ծայրի բարակ շերտի վրայ գրած է.

«Յիշատակ է Պետրոս կաթողիկոսին ի սը Աթոռոյ Գանձասարին»:

Մենք կարծում ենք, որ այս երկու կտորն էլ միևնոյն կաթողիկոսին են պատկանում: մէկի մէջ գրած է թիւը, միւրի մէջ կաթողիկոս տիտղոսը: Աղուանից այդ կաթողիկոսի մասին շատ քիչ տեղեկութիւն ունինք: Շահխաթունեանի «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ դաւառացն Արարատայ, Հատ. 2. ՝ ի էջ 333 Աղուանից կաթողիկոսաց ցանկի մէջ գտնուած ենք Պետրոս անունով երեք կաթողիկոս 1. Տէր Պետրոս կամ Պինե-

դաս ա, յեպիսկոպոսութենէ Գարգմանայ. 2. Պետրոս Բ. որի մասին ասած է. ի ՉԼԲ թուականէն Հայոց մինչ ցՊԾԵ թիւն երկու կաթուղիկոսուէնք յիշատակին նստեալ յաթոռ, որոց անուանք Սուքիաս և Պետրոս, իսկ ամբ որոշ տեղեկութեամբ իշխանութեան նոցին անյայտ. և 3. Տէր Պետրոս Գ. Խանձկեցի. զսա յիշատակէ արձանագիրն որ ի ճակատ բեմի վանացն Սաղիանու ի թիւն ՌՃԹ 1660 և յիշատակարան մաշտոց գրքոյ միոյ եղելոյ ի թուին ՌՃԹԱ. յիշատակէ և Զաքարիա Սարկաւագ Յօհանավանաց. Հտ. Բ. ԳԼ. 38, որ և վախճանեցու ի ՌՃԻԳ. թուին յամի 1675: Սաղաւարտի յիշատակարանը ցոյց է տալիս 1651 թ., երբ նա գեռ կաթուղիկոս էր: Սորա նախորդ Տէր Գրիգոր Գ մեռաւ 1653 թ., բայց կարողացաւ գեռ իւր մահից առջ Պարսից կառավարութեան միջոցաւ առանձին հրովարտակաւ կաթողիկոս հրատարակել տալ Պետրոս Գ ին (տես Ս. եպ. Զալալ. հատ Բ. էջ 487—490). Մեր յիշատակարանն էլ ապացուցանում է, որ Պետրոսը ապրում էր շի դուռն սրբոյն Գրիգորի, և մօտ լինելով կաթուղիկոսարանին, կարողացել էր գրաւել ժամանակակից կաթողիկոսի համակրանքը, ուստի և նրանից ձեռնտըութիւն գտաւ բարձր ատիճանի հասնելու: Պետրոս Գ. կաթուղիկոսը պատմութեան մէջ յայտնի է իւր մի քանի շինութիւններով, օրինակ Վարանդայ գաւառի շերտեր գիւղի հրաշալի տաճարը, որ Ամարաս վանքի ամարանոցն է և նրա ծննդավայր Խանձք գիւղի եկեղեցին, որոնց արձանագրութիւններն մինչև օրս էլ մնում են: Նա մեռաւ 1674 թ.ին:

Երբորդ կտորը մի հրաշալի վակաս է, որ Սաղաւարտի հետ միասին է ուղարկած և որը մեծ հաւանութեամբ դարձեալ նոյն անձին է պատկանել, գորա համար մեք ուրիշ կուռան չունինք, բայց միայն վակասի թրւականը: Սա անկասկած կանոցի ձեռագործութեան ամենաընտիր և ամենանուրբ յի-

շատակներից մէկն է և վայլուճն ապացոյց է թէ այդ արուեստը ինչպէս առհասարակ Ասիոյում հայերի մէջ էլ բարձր զարգացման էր հասած: Նրա երկարութիւնն է 56 սանտիմետր, լայնութիւնը 15, 5 սանտ: Ամբողջի վրայ ասեղնագործած է 9 պատկեր: Վակասի լայնութեամբ և երկարութեամբ 1, 5 սանտ. մի բարակ շերտ է որոշած գրութեան համար, իսկ պատկերի համար տեղ է մնում միջի քառանկիւնին: Գրութեան շերտի հիմքը որոշած է կապոյտ և դեղին ապրեշուսեայ թելերից հիւսուածք, իսկ պատկերների հիմքը հիւսուած է սոկեայ թելերով ամենանուրբ համաչափութեամբ: Պատկերները իրարից բաժանուած են խորաններով, որոնց սիւնակները և կամարները ազնիւ մարգարտաշար է, իսկ սիւնակների հիմքերն ու խորանները կապոյտ և կարմիր կեղծքարեր են, որոնց գոյները մէջումէջ փոխւում են: Արուեստագործը իւր նկարների համար ընտրել է մարմնի կաշի գոյնի համար սպիտակ թել, մազերի համար կամ ամբողջովին դեղին կամ կարմիր, իսկ շորերի վրայ գործ է դրել վայլուճն գոյներ. դեղին, կանաչ, կապոյտ, կարմիր, իսկ շուաքների համար գործ է անած աւելի մեղմ գոյներ: Մինչգեռ նախկին թագի վրայ պատկերները հանդիպակահայեաց էին, սոքա ընդհակառակը մեծաւ մասամբ իւրեանց երեսները դէպի մի կողմ են դարձրած. նոցա լուսապսակի կիսաշրջանի գիծը մարգարտաշար է, իւրաքանչիւրի գլխի վերելում գրած է ներկայացրած անձի անունը:

1) ՅԵՍԻԱ կանգնած է երեսը դէպի աջ կողմը դարձրած և բաց սոկեկազմ գիրք է կարգում: աջ թևի վրայ յենած է մի ինչ որ գաւազանանման իր. նա ունի երկար մազեր և մորտք, հագել է դեղին շապիկ և կապոյտ վերարկու: 2) ՅԼՆՆԷՍ աւետարանիչը կանգնած ձախ ձեռով բռնել է Աւետարանը, աջով գրում է, իսկ ստների տակ կանգնած է արծիւր և գլուխը թեքած նրան է նայում:

Աւետարանիչը երիտասարդ է, անմորուս, ունի փայլուն սպիտակախառն շապիկ և կանաչ վերարկու: Յ՝ ՄԱԹԷՍ Աւետ. նստած է դէպի ձախ, իսկ երեսը դէպի աջ է դարձրած լսելու համար մօտը կանգնած մանկական կերպարանքով ներկայացրած հրեշտակին, գրում է աւետարանը աջ ծնկանը վրայ յենած. մորուքի և մազերի մէջ նկատելի են ձերմակ մազեր: Նա հագել է մուք դեղին շապիկ, կապոյտ վերարկուի միայն ծայրն է երևում աջ ծնկան վրայ: Հրեշտակը հագին սպիտակ լուսեղէն շապիկ ունի, աջ ձեռք պարզած է և ցոյց է տալիս Աւետարանի վրայ:

Կենդանի երեք պատկերը. ՈՐԷԻ, ԱՄԱՄԻՆ, վերևից ՄԲ ՀՈԴԻ և ՀԱՅՐ աւելի սերտ կապով են կապած իրար հետ և մի տեսակ ամբողջ խումբ են կազմում: Նոցա խորանների տղեղները միևսներից աւելի բարձր են և երկու ու երեք կիսաղեղից են բաղկացած: Միջի պատկերը ներկայացնում է Աստուածածինը՝ բազմած, աջ ծնկան վրայ մի արկղիկ դրած, ձախ ձեռք կրծքին դրած, մազերի գոյնը դեղին է, շապիկը դեղին, իսկ վերարկուն կապոյտ: Նրա գլխին՝ լուսասպակից վերև դրած է թագ մարգարտաշարից, և ՕԺը մանր փերուզայից և հինգ կապոյտ և կանաչ գոյնանի կեղծ քարերից: Թագից վերև դէպի Նա է սաւառնում Ս. Հոգին, իսկ աջ և ձախ նստած են Արգին և Հայրը, իւրաքանչիւրը աջ ձեռք պարզած դէպի Աստուածածին: Արգին շապիկ չունի, կուրծքը և աջ թեւը ամբողջապէս բաց է, կապոյտ վերարկուն ծածկում է միայն մարմնի մի մասը. ձախ ձեռին բռնած է խաչ, իսկ աջ ձեռք Հօր Աստուծոյ նման առաջ պարզած լինելով, արուեստագործը սովորականից աւելի երկար է շինել և այդպիսով բնականութիւնը զօհել է հաւասարաչափութեանը (simetrie): Հայր Աստուածը գլխին եպիսկոպոսական թագ ունի և ձախ ձեռով բռնած է տիեզերքը, Համաչափութեան սկզբունքը պահպանուած է շատ գեղեցիկ կերպով այս խմբի մէջ:

Սոցանից յետոյ գալիս են 7, ՂՈՒԿԱՍ Աւետարանիչը դեղին շապիկով, կանգնած, բաց Աւետարանը ձախ ձեռին, հետևը կանգնած է եզր, որի միայն շրջալուսն ու պոչն է երևում: Երկու Ս. ՄԱՐԿՈՍ աւետարանիչը, ծածկած Աւետարան աջ ձեռում, ձախը կրծքին դրած, հետևում առիւծը և վերջապէս 9, ՊԵՐՐՈՍ առաքեալը, բնապին ձեռին, շորերով նման Յիսիային:

Այս է շուրջի գրած յիշատակարանը:

«Յիշատակ է վակասս Վառվառին և ծնողացն Յովհաննիսին, Մարարին և եղբաւրն Գլցին Մկրաչին թլամիշ է (այս տառերը թէւ շատ պարզ, բայց չկարողացայ մեկնել, թէ ինչ բառ է) թղին Ռձժէ»:

Այս 1667 թիւը և Սաղաւարտի հետ գրունուիլը համարեա թէ անկասկած են կացուցանում, որ այս վակասն էլ Պետրոս Գ կաթողիկոսինն է, իսկ արուեստաւորը եղել է տիկին Վառվառէն, որը իւր ձեռքի ընտիր աշխատանքը նուիրել է ի յիշատակ իւր, իւր ծնողների և եղբարցը Աղուանից կաթողիկոսին: Եւ իրաւամբ նա կաթողիկոսական ընծայ է: Պատկերների երեսների արտայայտութիւնը, նոցա բնորշ գծագրութիւնը, նոցա բռնած դիրքը, հագուստները, շորերի ծալքերի ճշտութիւնը, փայլուն ապացոյց են, թէ ասեղագործը ինչ մեծ վարպետութեան է հասել և ինչպիսի ընտիր օրինակներ իւր աչքի առաջ ունեցել:

Պահուած է լաւ, միայն մի քանի մարգարիտներ են ընկել:

Չորրորդը մի պարզ խեցի անօթ է, փոքր շշի չափ նեղ բերանով, և բարակ խողովակով կողքից հեղուկը թափելու համար և բռնելու կոթով: Սրբազան Սմբատեանը դրա կողքից քաշ արած մի թղթի վրայ գրել է «Հագարեան անօթ Աղուանից աշխարհի»:


Ահա սոքա են Մեսրոպ արք եպիսկոպոսի ուղարկածները, որոնք թէւ ոչ այնքան վաղ ժամանակուայ հնութիւն, բայց այնուամենայնիւ կարող են ծառայել իբրև փայլուն

ապացոյց՝ որ դեռ մի քանի հարիւր տարի առաջ մեր հայ ընտանիքների մէջ ասեղնագործութեան արուեստը բաւական յայտնի զարգացմանն էր հասել:

Սոցա վրայ չեմ կարող չաւելացնել նաև մի գեղեցիկ հնութեան յիշատակութիւնը՝ որը ինձ ուղարկեց մի գերմանացի պ. Ֆոն Գոտվալդը կաղզուանից:

Այդ պարոնը Ս. Թճուկից փոքր յետոյ այստեղ գալով վանքը տեսնելու նպատակաւ և լսելով որ այստեղ հետաքրքրուած են և ժողովում հնութիւնների լսօտացաւ ինձ մի զրահ ուղարկելի որ բեղման ժամանակ գրտնուել է Ղարա-Ղալա (Երուանդակերա) գիւղում: Այդ զրահը (КОЛЪЧУГЪ) բարակ երկաթեայ օղերից շինած մի շապիկ է՝ որ մինչև օրս էլ քրդերի և ըստ ոմանց նաև պարսիկների ու չերքեզների մօտ գործ է դրուած թրի և դաշոյնի հարուածների դէմ պաշտպանուելու համար: Պարոնը այդ թանգագին ընձան ինձ ուղարկելով առաջնորդուեց այն գաղափարով թէ աւելի լաւ և աւելի նշանակութիւն կունենայ երկրի մէջ գտած հրնութիւնը երկրի մէջ պահելի քան ուղարկել Եւրոպայի մի որևէ բազմահարուստ թանգարան՝ որի մի անկիւնում անհետ և աննկատելի պիտի կորչի:

ՄԵՍՐՈՊ Վ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ.



## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Գ \*

Մ

**Մ** • Խորենացու լաւ չհասկացուած բառերից մէկն է „այրէջող“ մի անգամ միայն գործածուած բառը. „Թողո վրդականք վէպը՝ ստահակք՝ մեծախօսք՝ ան-

վաստակք՝ այրէջող“ վնասակարք՝ փախողք ի ժառանգութենէ“: (Խոր. Գ. ողբ): Վերջին թարգմանիչներից Հ. Խորէն Ստեփանէն այդ բառը թարգմանում է „էրբ ինչէջող“: Լմինը իւր նորագոյն ռուս թարգմանութեան մէջ՝ НАСМѢШЛИВЫЙ=ճաղրող՝ ճաղր և ծանակ սիրող: Մինչդեռ „այրէջող“ նշանակում է կրակ ձրգող՝ գիտութեամբ հրդեհող: Հրձգութիւնը այն է՝ թշնամաբար մէկի տունը՝ դէզը՝ մարազը և այլն հրդեհելը ամենատարածուած քրէական յանցանքներից մէկն է այժմս էլ հայ գիւղացիների մէջ: Երևի այդպէս է եղել և հնումը: „Այրեցող“ բառի այդ իրաւարանական նշանակութեանը վկայում է Մխիթար Գօշքը. „ԽԼ. Յաղագս դատաստանաց այրէջող“:— Եթէ իմանա՝ քիչ քիչ քան... Ապա եթէ քիչ քիչ քիչ քիչ կամ յայսպիսեաց իցէ՝ կրկին լիցի տուգանքն: Սոյն լիցի քանիչ և նմանեաց նորին. այսպէս հանդերձից և նոցին նմանեաց“: (Պատասնագիրք, հր. Վ. Բաստ. Վրդշապտ. 1880 եր. 359: Տես նաև եր. 353: Յաղագս դատաստանաց հրդեհից. այլ և՛ Սերսէս Բ կաթողիկոսի կանոնները կանոն ժիւ. — վասն որ դարձնայրէ ընչէ՝ քիչ... կանոն ԽԹ— վասն որ հայրէ քիչ այրէ և այլն: Պատաստանագիրք, յառաջաբան. եր. 74):

Մի ուրիշ աւելի կարևոր վկայութիւն, որը անշուշտ աչքի առաջ է ունեցել Խորենացու Ողբի հեղինակը. — „Վնասակարացն և այրէջողացն՝ որ զտունս այրեն և կամ զայլ ինչ նիւթ՝ Ի ամ ապաշխարեցեն“: (Եպիփանուկիարոսի սբ. հայրապետի կանոնք. Չեռ. Մատեն. Իջ. № 1737): Հմմտ. Խորենացու սացուածը. „այրէջող“ վնասակար“:

կութիւն իմ Խորենացու Պատմութեան Ուսումնասիրութեանց, որը ընդհատուեց ծանր հիւանդութեան և երկարատե բացակայութեան պատճառով. Վերնագիրը փոխուած է՝ որովհետև այս հետազօտութիւնները վերարբուած են ոչ միայն Խորենացուն, այլ մեր հին մատենագրութեանը ընդհանրապէս:

\* Այս գրուածքը պէտք է նկատել իբրև շարունակ